տառերի կցումը, որ հազիւ է երևան գալիս մեր հնագրութեան մէջ և ընդհանրացած է միայն ԺԻ. դարում։

Բայց այս արտաքին նշաններով յարուցուած կասկածը աւելի հաստատուն կռուան է ստանում ուրիշ դիտողութիւններով. Propaganda fide-ի պատճէնը Շ (= 500) թուականն է կրում. այդպէս է կարդացուել և հասկացուել մինչև այժմ նաև վանքի մեծ արձանագրութեան թուականը. մինչեւ իսկ մենք էլ մեր Գրչութեան Աբուեսոի Քարտէզի մէջ (§ 21) հարկաւոր ուշադրութիւնը չենք դարձրել բնագրի վերայ, հասկանալով այն 1051 թուականի մտքով։ Բայց այդպիսի ժամանակագրութեամբ անհասկանալի կը լինէր, որ մի և նոյն տարին իրրև Բճնոյ եպիսկոպոսներ դիւանական պատճէնի մէջ յիշւում են Վանական և Համամար, իսկ արձանագրութեան մէջ Յովհաննէս։ Այս դժուարութիւնը վերանում է ինքնասինքեան թուականի ճիշդ ընթերցմամբ, որ է «ի հինգհարիւր երրորդի ամի» եւ ոչ «ի հինգհարիւրերորդի ամի» ինչպէս հասկացուած է մինչեւ այժմ։ Տարբեր է նաեւ երկու վաւերագրերի բովանդակութիւնը. մի տեղ խօսքը շինութեան մասին է, իսկ երեք կամ չորս տարի յետոյ ոսկի մատանի բերել տալու եւ բիւզանդական շղջքորթութեան՝ Կոստանդին Մոնոմախի հասցէին։ Մեզ համար պարզ չէ միայն, թէ ի՞նչ Հասան է, որին մատենագիր Գրիգոր մագիստրոսը իւր արձանագրութեան մէջ կամենում է, որ յիշեն քանի ինքը կենդանի է։

Վանքի նախնական վիճակի մասին՝ Հասանայ որդու չինած, տեղեկութիւն չունինք մինչեւ Գրիգոր Վասակայ որդին, որ յատուկ թղթով իւր չինած եկեղեցիներին երկու գիւղ և մի այգի է նուիրում, իսկ Բջնիի(*) Վանական եւ Համամար եպիսկոպոսները 25 գիւղ և մի քաղաք սահմանում են և հաստատում որպէս թեմ և կալուած նոյն վանքին, իրենց վճիռը վաւերացնելով «ձեռնագրովս եւ կնքովս»։ Այս վերջին խօսքերը ցոյց են տալիս, որ Մագիստրոսի վերոյիշեալ խօսքերն արձանագրուած չէին քարի վերայ, այլ թղթի կամ մագաղաթի, որի վերայ աւելացնում են եպիսկոպոսներն իրենց ստորագրութիւններն ու կնիքը. դարձեալ մի հանգամանք արձանագրութեան քանդակումը ուշ ժամանակի հետ կապելու համար։

Այսպիսի հարուստ վանքն, անշուշտ, պէտք է և



Պատկեր 125.

մավար, իսկ արձանագրութեան մէջ Յովհաննէս։ Այս դժուարութիւնը վերանում է ինքնասինքեան թուականի ճիշդ ընթերցմամբ, որ է «ի հինգհարիւր երրորդի ամի» եւ ոչ «ի հինգհարիւրերորդի ամի» ինչպէս հասկացուած է մինչեւ այժմ։ Տարբեր է նաեւ երկու վաւերագրերի բովանդակութիւնը. մի տեղ խօսքը շինութեան մասին է, իսկ երեք կամ չորս տարի յետոյ ոսկի մատանի բերել տալու եւ բիւզանդական շղջքորթութեան՝ Կոստանդին Մոնոմախի հասցէին։ Մեզ համար պարզ չէ միայն, թէ ի՞նչ Հասան է, որին մատենագիր Գրիգոր մագիստրոսը իւր արձանագրութեան մէջ կամենում է, որ յիշեն քանի ինքը կենդանի է։

Վանքի նախնական վիճակի մասին՝ Հասանայ որդի պայծառ վիճակի մէջ լինէր, բայց շատ կարճ ժամանակի համար, որովհետեւ Սելջուկեան արշաւանքներով կրկին նսեմացաւ Աստուածատուր աբեղայի յիշատակարանի խօսքերի համաձայն՝ «պայծառապէս ճոխացեալ ի սկզբանն և դարձեալ խրթնացեալ», մինչեւ նորոգուեցաւ հայր Պետրոսի եւ իւր եղբօր Յովսէփի ձեռքով։ Յիշատակարանը մեզ լիովին գաղափար է տալիս հայր Պետրոսի անձնաւորութեան մասին և գրուած է 1184 թուին՝ Կեչառիսում, երբ արձանագրութիւնից երևում է, որ Պետրոս Գետադարձը 1031 թուին յատուկ թեմ և եպիսկոպոսութիւն է հաստատել Բճնիի համար, նշանակելով և թեմի սահմանները. այդ թեմից 25 գիւղ յատկացուած է վերոյիշեալ եպիսկոպոսների ձեռքով Կեչառիսի վանքին։

(*) Բջնիի մի արձանագրութիւնից երևում է, որ Պետրոս Գետադարձը 1031 թուին յատուկ թեմ և եպիսկոպոսութիւն է հաստատել Բճնիի համար, նշանակելով և թեմի սահմանները. այդ թեմից 25 գիւղ յատկացուած է վերոյիշեալ եպիսկոպոսների ձեռքով Կեչառիսի վանքին։